

ԹՈՒՐԹՕ-ՔՐԴԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆՔԻ ՔՍԱՆԵՒՀԻՆԳԱ-
ՄԵԱԿԸ

1880—1905

(Նիւթեր հայոց նորագոյն պատմութիւնից)

III

Ջուլամերկից մենք շարունակեցինք մեր ուղևորութիւնը դէպի Շէմզդինան, կտրելով Կեաւառի ընդարձակ դաշտավայրը երեքօրեայ ճանապարհորդութեամբ: Կեաւառ աւանից կոնսուլը մի պատգամաւորութիւն ուղարկեց շէյխին՝ իր այցելութիւնը ղեկուցանելու և հիւրընկալութիւն խնդրելու: Թուրք և քուրդ մեծաւորները բաւական վարպետորդի են և գիտեն եւրոպացի ճանապարհորդներին, մանաւանդ պաշտօնական անձնաւորութեանց պարտ ու պատշաճ ընդունելութիւն անել և սիրալիբ հիւրընկալութիւն ընծայել, որոնց մի քարով երեսուն թռչուն զարկած կը լինեն: Նախ որ նրանց կապոյտ աչքերին թող փչելով կ'արժանանան նրանց շույլ գովասանքներին և ապա իրանց զրպանները կը լցնեն մուֆթա փողերով ու մեծագին ընծաներով, որ եւրոպացիք առհասարակ Արևելքում մեծ առատածեռութեամբ աջ ու ձախ կը բաժնեն, մինչդեռ նրանցից շատերը իրանց երկրում աղքատի մը սև փող մ'իսկ չեն տալ...

Պատգամաւորը վերադարձաւ մի քուրդ ձիաւորի հետ, որին շէյխը յատկապէս ուղարկել էր իբր մահմանդար «կոնսուլ ինկիլիզ»-ին հրաւիրելու և նրան ուղեկցելու որպէս վաւառ և թիկնապահ: Քրդական շքեղ տարազը հագին, ձիւնի պէս սպիտակ փաստակով, այնալի թուանգը ուսին, կեռ դաշոյնը մէջքին խրած և 300-նոց փամփշտաշերտակով զրահաւորուած մի կատարեալ հեծելազօրք էր մեր քուրդ մահմանդարը, որ նիզակըն ի ձեռին խորխտ ու ինքնավստահ մեզ առաջնորդում էր, իսկ դէմքով այնքան էլ տհաճելի չէր նա: Քրդերը արիական մեծ ցեղին պատկանելով՝ իրանց վայրենութեան մէջ էլ բաւա-

*) Տես «Մուրճ» № 2.

կան դիւրեկան երևոյթ մը պահել են, մինչդեռ թաթար-աֆ-
շարային ծագում ունեցող մահմեդականները ընդհանրապէս
մոնղոլական վայրագ, սոսկում ազդող դէմք մ'ունեն։ Այդ ամեն
տեղ նկատելի է։

Անվերջ և անվախճան լեռնային ելեջներէց ճեղքե-
լով սարային բարձրութիւնները երեկոյեան դէմ մեր քարա-
վանը վերջապէս մուտ գործեց Շէմզդինան, շէյխի աւանը։
Չմոռանամ ասել որ հարիւրաւոր զինուած ձիաւոր քրդեր հիւ-
պատոսին ընդ առաջ եկել էին, որոնք նախ ճամբուն վրայ
կարգով սալամի կանգնելով, երբ նա առաջ անցաւ, իսկոյն և
եթ նրան շրջապատեցին և հետևում էին. իսկ մենք մնացինք
սվիտայի շրջանից դուրս և հե ի հե ձիերնիս առաջ էինք մը-
ղուս։ Գիւղը մտնելիս շէյխի թարգմանը, Աղա Սէյիդ Մահմադ
Սադրը, որ մի աչօք կոյր էր, Շէյխի կրտսեր որդու Արդիւլ-
Գադէրի հետ անապին թուով հետևորդներով կոնսուլին ընդա-
ռաջ ելնելով, Քնոշ ամեղիք բարի գալստեան սովորական ողջոյնը
տուեց յանուն իր պետին և հրաւիրեց ի տուն։ Հիւպատոսը որ
անգլ. թնդանօթածիզ սպայի համազգեստն էր հագած և պատ-
ւոյ սուր կողքից կախ տուած, իսկոյն զինուորական բարև տու-
եց և ձիուց վար իջնելով Շէյխի դռնաղը գնաց. կարծեմ նրա
խնդրանօք իսկոյն եկան մեզ էլ նրանց մօտ տարեցին, վասնզի
այս տարօրինակ ճամբորդութեան միջոցին կոնսուլի հետ լաւ
մտերմացել էինք. նա խօսում էր ֆրանսերէն բաւականի ազատ
կերպով, պահելով, թէև անգլիական արտասանութիւնը և
շեշտը։

Երկյարկանի քարաշէն ընդարձակ մեծ տուն մ'էր Շէյխի
դռնաղը, գեղեցիկ պարտէզի մը կենտրոնում կառուցուած, եւ-
րոպական խոշոր լուսամուտներով, որոնք գոյնզգոյն ապակիներ-
ով զարդարուած էին ըստ պարսկական ճաշակի։ Տունը բաղ-
կացած էր բիրումն եւ աղէրումն արտաքին և ներքին բաժան-
մունքներից. դրսը մասը դրուեց մեր տրամադրութեան տակ.
երկրորդ մասում ապրում էր Շէյխի ընտանիքը 4 զխաւոր կի-
ներից բաղկացած, որից մինը, իրջպէս ես տեղեկացայ, հայազ-
գի մի աղջիկ էր և որին Շէյխը ամենից շատ սիրում է եղել,
այն աստիճան որ թոյլ է տուել նրան մնալ իր հայրենի կրօնի
մէջ և պաշտել իր դաւանած Աստծուն ազատօրէն։ Այդ հանգա-
մանքը իհարկէ քիչ պատիւ չէր բերում մոլեռանդ հռչակուած
Շէյխի տոլէրանսին։ Բայց թէ ով էր այդ երջանիկ կամ դժ-
բաղդ հայ կինը, մենք չկարողացանք հասկանալ։ Քիւթիւքի
Սիմոն Զիլինգարեանցը թերևս կարողացել էր թափանցել
գաղտնիքի խորը և հրապարակ էլ կը հանէր գուցէ, եթէ

1884-ին Սովուջուլուղի մօտերը քրդերի ձեռամբ չարաչար սպանուած չլինէր: Ուրեմն այդ գաղտնիքն էլ նրա հետ գերեզմանի մօտաւ կամ անգերեզման թաղուեց մոռացութեան մէջ:

Ընդունելութեան մեծ սրահը, ուր մենք գտնուեալ էինք, բաւականի լաւ ճաշակով կահաւորուած էր պարսկական ընտիր և մեծագին գորգերով և դիւաններով ու շալէ վարագոյրներով, կային նաև եւրոպական աթոռներ վանուած շինուած հայ արհեստաւորների ճարտար ձեռքով. բայց սեղանի նման ոչ մի բան չկար այնտեղ. այդ պատճառով հիւպատոսը բաւական նեղուեց ճաշելիս կամ գրելիս, վասնզի այդ գործողութիւնները ըստ արեւելեան սովորութեան գետնի վրայ նստած ծալլապատիկ ոտքերով (կոնսուլի սրունգները չափազանց երկար էին) պէտք էր կատարել, որ քիչ դժուարութիւն չպատճառեց նրան:

Միւս օր առաւօտեան Շէյխը բարեհաճեց մեզ այցելել և «խոշ ամեդի» ասել. նրան ընկերանում էին իր մեծ որդին՝ Շէյխ Մէհմէդ Սադըղը, Արդուլ Գադէրը և Թարգմանը՝ Սէյիդ Մէհմէդ Սադըդը՝ Նա 45—50 տարեկան մի մարդ էր երկայն հասակով, սեփ-սև մազ ու մօրուքով և հագած էր ձիւնի պէս սպիտակ շորեր, գլխին ճերմակ ամամիւն, միայն ձեռքից կախ թողած թէզգթէնը դեղին գոյն ունէր քարիքը քիչ երկար լինելով: Նրա նախաձեռն բարեբարոյ էր, գրաւիչ ու յարգանք ազդող: Նա նրստեց մի դիվանի վրայ հիւպատոսին հետ դէմ առ դէմ, իսկ միւսները ոտի վրայ կանգնած մնացին ի յարգանս նորին: Նա քրդերէն էր խօսում, թերևս իրանց ապագայ պաշտօնական լեզուն համարելով այն, իսկ թուրքերէն կամ չգիտէր նա բոլորովին, կամ դիտմամբ չէր ուզում խօսել այդ իրանց այնքան ատելի լեզուով, որին նրանք «լիսանը ումի»՝ յունաց լեզու են անուանում:

Այս առաջի տեսակցութեան նպատակն միմեանց հետ ծանօթանալը լինելով, միայն աւուր պատշաճի խօսքերով անցաւ, և համարեա թէ իբր կէս ժամու չափ տևեց: Շէյխը իր խորին գոհունակութիւնը յայտնելով կոնսուլին այն մեծ պատուին համար, որ արեւ էր նա այցելութեան գալով իրան, վերկացաւ և մեկնեց սենեակից իր սվիտայով: Իսկ մենք էլ դուրս եկանք ազատ օդ շնչելու և գիւղին հետ մօտից ծանօթանալու:

Շէմզդինանը չորս կողմից բարձր սարերով պաշարուած մի աւան է աւելի փոքր ինկած, իբր 2 հարիւրակ տներով, քուրդ, հայ և հրէայ բնակիչներով. ունի շուկայ, մի քաղնիք, մզկիթ ու մադրասա, ուր քուրդ երեխայք ուսանում էին գետնի վրայ նստոտած մի մոլլա ուսուցիչի շուրջը՝ արաբերէն և պարսկերէն լեզուներու պարագելով:

Նկատելի էր որ պետական օսմանեան լեզուից ոչ մի դաս չէր աւանդուած նրանց։

Գիւղը իր այգիներով, մրգաստաններով և բարդի ծառերով աչքի հաճելի մի տեսարան էր ներկայացնում։ Խնչպէս երևում էր ջուրն էլ առատ պէտք է լինէր, քանզի մենք պատահեցանք մի քանի վճիտ աղբիւրներ, որից քրդուհիք սափորներով ջուր էին տանում. իրենց պարզութեան մէջ նրանք բաւական սիրուն էին։ Շուկայում մենք պատահեցանք վանեցի արհեստաւորների և վաճառականների, որոնք հանգիստ իրանց գործին էին։ Ակներէ էր որ Շէյխը քաջալերում էր օտարազգի եկուորներին իր դիւղը շէնցնելու, որոնց նա իհարկէ մեծ պէտք ունէր, նկատելով որ քրդերը առհասարակ արհեստների ու վաճառականութեան չեն հետևում։ Նրանց աղքատ դասակարգը միայն երկրագործութեամբ է պարապում, իսկ հարուստները սաղ օրը պարապ-սարապ ման են գալիս։

Այդ ժամանակ այնտեղ մենք հաւաքուած տեսանք բազմաթիւ քուրդ աղաներ և բէգեր երկրի ամեն կողմից, և ալնեբէ գիւղում մի արտասովոր շարժում ու եռանդոտ կեանք կար։ Կոնսուլը, ցանկանալով իմանալ թէ դրանք ովքեր էին և ինչո՞ւ համար եկել էին այնտեղ, մահմանդարից հարցրեց այդ մասին— դրանք աշիրաթների պետերն են, պատասխանեց նա, և եկել են Սիւլէյմանիյէից, Ամադիայից, Օրամայից, Պօթանից, Սասունի լեռներից, Աղբրդից, Մուշից, Արաղայից, Վանայ վիլայէթից և Պարսկական Քրդաստանից՝ իրենց մեծարանքը մատուցանելու Շէյխին, Մեքկայից վերադառնալուն առթիւ և ստանալուն Ս. Մարգարէի գերեզմանից նրա բերած օրհնութիւնը։ —Դրանք բոլորը, ինչպէս կարող եղան իմանալ Շէյխի վերադարձի լուրը, քանի որ այստեղ հեռագրատուն չկայ, հարցրեց կոնսուլը։

—Կ. Պոլսից Շէյխը ուրոյն-ուրոյն նրանց հեռագով յայտնել էր թէ Խըբ կը ժամանէ այստեղ։

—Այդ տարբեր ցեղերի պատկանող քրդերը բոլորն էլ միևնոյն լեզուով են խօսում, թէ տարբեր լեզունհր ունեն։

—Այո, միևնոյն քրդերէն լեզուն են գործածում նրանք, քանզի նախ որ բոլորն էլ կուռմանջի են և յետոյ ամենքն էլ սիւննի իսլամ։ Կան Զազա կոչուած քրդեր ալ, բայց նրանց լեզուն տարբեր է և նրանցից եկած ալ չեն այստեղ, վասն զի անոնք մեզանից չեն և Շէյխի իշխանութեանը չեն հպատակուում։

—Նրանք ռոտեղ են բնակուած։

—Դիրարէզրի կողմերում:

—Բայց այս բաղմաթիւ հիւրերի ներկայութիւնը պէտք է թանգ նստի ձեր Շէյխին, նկատեց անգլիացին, այնպէս չէ:

—Այո, սակայն այդ ոչ մի ծանրութիւն չէ մեր Շէյխին համար քանզի նախ որ նա շատ հարուստ է, օրինակ ամբողջ Հէրի ընդարձակ գաւտուի մէջ կատարուած աղնիւ ծխախոտի մշակութեան բոլոր արդիւնքը Շէյխի գանձարանն է մտնում և մինչև ցարդ Պոլսոյ ֆուանկների Ռէփի կոչուած մոնոպոլիս-յի ընկերութիւնը, որ պետական հաստատուած ալ է, շնորհիւ մեր մեծ Սուլթանին չկարողացաւ կորզել նրանից այդ հինա-ւուրց իրաւունքը, վասն զի Սուլթանը մեր Շէյխին շատ է սի-րում և երբեմն թանկագին ընծաներ ուղարկում է նրան: Յե-տոյ այս ալ կայ որ այս բոլոր այցելու հիւրերը մեծամեծ ըն-ծաներով են եկած այստեղ. ոչխար, ձի, արժէքաւոր շալեր, գորգեր և զրամ բերած են նրանք Շէյխին նուէր:

Բանից դուրս եկաւ որ Շէյխը իսկապէս մեծ հարստու-թեան տէր պէտք է եղած լինի և թէ, հետեաբար, նա կարող իր որեւէ նպատակներն ու դիտաւորութիւնները դիւրաւ էլ գործ դնել, վայելելով միեւնոյն ատեն այդքան մեծ հեղինակու-թիւն և ժողովրդականութիւն քրդական աշխարհում:

IV

Երբ տուն վերադարձանք հիւպատոսը նորից իսկոյն գրի առաւ իր բոլոր տեսածն ու լսածը, իր տեղեկագրի նիւթ պատ-րաստելու համար: Կէսօրուայ ճաշից յետոյ (մեղ տուեցին քըր-դական համեղ կերակուրներ, ձիւնի պէս սպիտակ լաւաշ հաց, արմաւով պատրաստած մի շատ ճաշակաւոր քաղցրաւէնի, ւալ-դուշ—մածնաջուր—և առատ պտուղներ): Կոնսուլը փափաք յայտնեց փոխադարձ այցելութեան գնալ Շէյխին, ուստի թարգ-ման սէյիթը եկաւ նրան առաջնորդելու, մենք էլ հետեւելով բար-ձրացանք երկրորդ յարկը և մտանք մի շքեղ կահաւորուած օ-թաղ որ Շէյխի առանձնասենեակն էր: Նա այնտեղ մե-նակ նստած էր մի դիւանի վրայ, իսկ կոնսուլի և մեզ համար աթոռներ էին դրուած: Ժպտագին և յոյժ քաղաքավարի կեր-պով նա վեր բարձրացաւ և սիրալիկ կերպով ընդունեց մեզ ա-մենքիս: Երկու թարգմանները սկսեցին իրանց պաշտօնը կա-տարել հաղորդելով խօսակցութիւնը իրանց պետերին: Սովո-րական աւուր պատշաճի խօսքերից յետոյ հիւպատոսը յայտ-նելով իր խորին շնորհակալութիւնը վասն սիրալիկ ընդունե-լութեան և սրտագին տեսակցութեան ու շքեղ հիւրընկալու-

թեան, թոյլաւորութիւն խնդրեց բացատրելու նրան թէ ինքը ինչո՞ւ համար եկել էր Շէմզդէինան: Շէյխը հրաւիրեց նրան խօսելու, յայտնելով թէ ինքը շատ ուրախ պիտի լինէր լսել կոնսուլի անելիքը և յօժարակցւած նրան ամեն բաւականութիւն պիտի ընծայէր: Այս խօսքի վրայ կոնսուլը իր թարգմանի ձեռքից մի խոշորածալ պահարան առնելով մէջից մի մեծադիր թուղթ հանեց ու ոտքի ելնելով Շէյխին մատուցեց: Այդ նրա Վանայ հիւպատոս կարգած լինելուն Սուլթանի կողմից դրուած ֆէրմանն էր, զոր քուրդ կրօնապետը նմամապէս ոտքի կանգնելով ընդունեց նրա ձեռքից, բաց արեց և համբուրելով ճակատին տարեց, յետոյ տուեց թարգման Սէյիդին որ կարդալով պարունակութիւնը նրան հաղորդէ: Ամէնքս էլ նորից նստանք տեղերս և հրովարտակի ընթերցումը և թարգմանօրէն բովանդակութեան հաղորդումը կատարուեց և թուղթը վերադարձուեց կոնսուլին:

Հիւպատոսը այնատեն սկսեց բացատրել թէ Անգլիական մեծ ազգը և զօրէղ պետութիւնը շատ դարերից ի վեր Օսմանեան փառապանծ տէրութեան հետ բարեկամական անխզելի կապերով կապուած լինելով փոխադարձաբար միշտ մտահոգութիւն ունեցած է թուրքիոյ ամբողջութեան պահպանութեանը մասին և մեծամեծ զոհողութիւններ էլ յանձն առած է անցեալում ի պահանջել հարկին իր բարեկամութիւնը Օսմանեան Սուլթաններին բանիւ և արդեամբ ցոյց տալու և ապացուցանելու: Յայտնի է որ թուրքիան ունի մեծ և հզոր թշնամիներ, որոնք միշտ առիթների են ման գալիս նրան ճնշելու և տիրանալու, այդպիսի ցանկալի առիթներ են նրանց համար Օսմանեան երկրի որևէ մասի մէջ պատահած ապստամբութեան խլրտումները և շարժումները: Ահա այդ կարգի անախորժ դէպքերի տեղի չտալու համար, ամեն ճշմարիտ հպատակ օսմանցու նուիրական պարտականութիւնն է հսկել և աշխատել, մանաւանդ Շէյխի նման բարձր դերի և մեծ հեղինակութիւն ունեցող անձանց համար դա մի սուրբ իրաւունք է: Սուլթանը զնահատելով Անգլիոյ կառավարութեան հինաւուրց մեծ բարեկամութիւնը բարեհաճել է թոյլ տալ հիւպատոսարաններ հաստատել կայսրութեան բոլոր կարևոր կենտրոններում, որպէսզի նրանք էլ օգնեն ամեն կերպով անկարգութեանց առաջն առնելու, երբ պատահեն. հետևաբար ինքն էլ որպէս Անգլիական կոնսուլ Վանայ վիլայաթի և շրջակայ երկիրների, լսելով որ Հաքիարիում քրդերը մի ինչ որ խլրտումների ու շարժմանց մէջ են, ըստ իր պարտականութեան փութացել է զեկուցանել Պոլսոյ մեծ դեսպանին, որի հրամանով ու հրահանգով ինքը Մարտ, 1906.

եկել է այժմ՝ խնդրոյն մօտից ծանօթանալու, և որովհետեւ առանց մեծ Շէյխի գիտութեան ու հրամանին այդ ընդարձակ երկրում ոչ մի այդպէս բան չի կարող պատահել, հարկ է եղել ուղղակի դիմելու նրան՝ լիակատար տեղեկութիւն ստանալու համար, որպէսզի ինքն էլ ըստ այն տեղեկացնէ Պոլիս մեծ դեսպանին:

Այս երկար ճառին ուշիուշով ունկնդրելուց յետոյ Շէյխը ինքզինքը հուաքեց և պատրաստեց պատասխանելու:

Նա խորին շնորհակալութիւն յայտնեց Անգլիոյ կառավարութեան, նրա բարեհաճ բարեկամութեան զգացմանց համար դէպի Թիւրքիան, որ միշտ պէտք ունի Անգլիոյ պէս մեծ և հզօր ազգի օժանդակութեան՝ թշնամեաց դիմադրել կարենալու համար: Շէյխը շատ ուրախ է լսելու որ մօտիկ Վան քաղաքում էլ հաստատուել է Անգլիական կոնսուլատ և մի բարի, ազնուական անձին, որպիսին է իր յարգելի հիւրը, յանձնուել է հիւպատոսութեան մեծ ու կարևոր պաշտօնը: Ծիշտ է և ցաւալի որ մերթ ընդ մերթ կայսերութեան մի որևէ մասում անօրէն, անիրաւ մարդիկ ապստամբութեան դրօշակ են պարզում Օսմանեան բարեխնամ տէրութեան դէմ, սակայն դժբաղտարար դրանք յաւէտ քրիստոնեայ ցեղեր են եղել միշտ, օրինակ յոյները, վալախները, սերբերը, դարադաղցիները, և վերջերումս էլ բուլղարները ու կրէտացիք, իսկ գալով իսլամ տարրին՝ մանաւանդ քիւրդ ցեղերին, նրանք էլ—Համդ ուլլահ Օսմանեան փառապանծ Սուլթաններին ամենահաջող, հնազանդ և հաւատարիմ հպատակներ են եղել միշտ և հայրենիքի պաշտպանութեանը համար էլ միշտ ի պահանջել հարկին իրենց արիւնը թափել են, քանի որ զօրքն ու զինուորը միշտ նրանցից է առնւում: Թէ շնորհիւ Սուլթանին այստեղ Հաքարիում էլ կատարեալ անվտանգութիւն կը տիրէ եղեր. միայն թէ չարամիտ մարդիկ սուտ լուրեր են տարածել Վանում քրդերի մասին, բայց ինքը Շէյխը իր գլխովը կարող է երդուել որ ոչ մի խլրտում, ոչ մի շարժում չկայ պետութեան դէմ և չի էլ կարող լինել, քանի որ բոլոր քրդերը չափազանց գոհ և շնորհակալ են մասնաւորապէս Սուլթան Համիդից, որ մեծ սէր ու վստահութիւն է տածում դէպի մեզ բուրդերս, և նա շատ բարի մտքեր ու հպատակներ ունի բուրդ ժողովրդի համար, որոնք հետզհետէ պիտի իրագործուեն ապագային, ինչպէս որ նորին մեծութիւնը իր բերանով անձամբ Շէյխին ասել բահահել է, երբ նա մի քանի ամիս տուջ պատիւ և երջանկութիւն է ունեցել նրան ներկայանալու Երզրզի պալատում: «Թող Ալլահը նրա կեանքի օրերը հազարապատիկ աւելցնէ»,

ասեց Շէյխը յուզուած, վերջացնելով իր ճառը, «քանզի նրա օրով քուրդ տարրը իր բազմադարեան վայրենութիւնից դուրս պիտի գայ լոյս աշխարհ և պիտի մտնէ փառքի ու բարօրութեան ասպարէզը»:

Հիւպատոսը և մենք ամենքս յոյժ զարմացած մնացինք Շէյխի այս պերճախօս ճառի մասին, որով նա կատարեալ աշուղութեամբ ժխտել էր նրան վերագրեալ ամեն ամբաստանութիւն՝ ապստամբութիւն սարքելու և արշաւանք գործելու նշանատմամբ: Դուք բոլորովին մտքից էլ պիտի չանցկացնէիք որ այդ հմտութեամբ և տակտիկայով խօսող մարդը լեռնական պարզամիտ, վայրենի մի քուրդ կրօնաւոր լինէր: Ընդհակառակը պիտի կարծէիք թէ դուք դէմ առ դէմ գտնուում էիք մի ճարպիկ դիպլոմատի հետ:

Անգլիացին սակայն դեռ բոլորովին յուսահատուած չէր թուում Շէյխից վերջապէս մի որևէ բան հասկանալու իր ապագայ ծրագիրների մասին, ուստի և շարունակելով իր ընդհատած ճառը, յարեց.—Ձեր այդ բոլոր ասածը շատ լաւ է բայց մի բան կայ որ կայսրութեան հեռաւոր անկիւններում, ուր սուլթանի աչքը չի կարող թափանցել և նրա կամքն ու հրամանները պէտք եղած չափով, եռանդով և երկիւղածութեամբ չեն կատարուած լինում, բնական է որ զեղծումներ և զրկանքներ էլ գործուեն, ի ֆնաս տէրութեան հաւատարիմ հպատակներին և հակառակ Սուլթանի բարի կամեցողութեան, հետեաբար ժողովրդեան այս կամ այն մասը կարող է դժգոհ լինել և մղուել դէպի ապստամբութիւն. ևս առաւել այս հեռաւոր լեռնական երկրում մասնաւորապէս քուրդ ազգաբնակչութիւնը անտարակոյս դժգոհութիւններ ու գանգատներ կրնայ ունենալ անարժան պաշտօնեաների՝ գործած չարիքների և կամայականութեանց պատճառով, և որովհետեւ նրանց արդար բողոքի ձայնը տեղը չի հասնում, բնական է որ տաք գլուխ մարդիկ յուզուեն, նրանց արտերն ըմբոստանան և այս կերպով անախորժ խլրտումներ և շարժումներ առաջանան. ուստի ես իբր ներկայացուցիչ վեհ. Թագուհու—God bless Her!—թո՛ղ Աստուած օրհնէ՛ նրան—(սա մի բարեմաղթութիւն է զոր անգլիացիք իրանց պաշտօնական խօսակցութեանց մէջ յաճախ կրկնում են, որպէս մահմեդականք իրանց մարգարէի անունը արտասանելիս պէտք է միշտ կրկնեն «Ալիքաթ-իւլ-Սալամ» բացազանչութիւնը) յայտնում եմ ձեզ որ այժմս է. Պոսում համախմբուած է մեծ պետութեանց ղեսպանախորհուրդը, որին մասնակցում է նաև Պապը Սալին—բարձր դուռը, այդ ժողովում Օսմանեան կայսրութեան վարչական դրութեան մէջ ուէֆորմներ

մտցնելու մասին լուրջ խորհրդակցութիւններ են տեղի ունենում ամեն օր և բոլոր հպատակ ազգերի վիճակը, բարուքելու պիտի ձեռնարկուի ի մօտոյ. դուք քրդերդ ալ իհարկէ ունիք ցաւեր ու պահանջներ, որոնց դարմանելու բաւականութիւն տալ դուք չէք կարող, բայց մեծ պետութիւնները կարող են և յօժարակամ, ուստի և փոխանակ քրդերը իրանց իրանց արդարութիւն անել ջանալու, աւելի բանաւոր և օգտաւէտ կը լինէր ուղղակի դիմել ղեսպանախորհրդին մի տեղեկագրով ձեր ժողովուրդի վիճակի բարելաւութեան համար պահանջուած կարգ ու կանոնների մասին, և ես ամենայն ուրախութեամբ յանձն կառնէի մի այդպիսի տեղեկագիրը ընդունել ձեզանից և մատուցանել ժողովին մեր մեծ գեսպան լորդ Դիւֆրենի միջոցով, որպէս ես արեցի Մուշ, Բիթլիզ և Վան նահանգների հայ ժողովրդեան առաջնորդների ինձ մատուցած այդ տ'սակ տեղեկագիրների և առաջարկած ռէֆորմների ծրագիրների մասին և վստահ եմ որ շնորհիւ վեհ. Սուլթանի բարեհաճ մարդասիրութեան և կամեցողութեան ի մօտոյ նրանց (Հայերին) պահանջներին մեծ բաւարարութիւն պիտի դրուի:

— Ինչպէս Զեղ ասացի, պատասխանեց Շէյխը, մենք ոչ մի դժգոհութիւն կամ դանդատ չունինք մեր տէրութիւնից, և եթէ ունենայինք ալ, ուղղակի կը դիմէինք նորին մեծութեան մեր բարեգութ Սուլթանին, որ միշտ պատրաստ է լսել մեզ և զոհացում տալ մեր պահանջներին. որպէս մի օսմանեան հպատակ իսլամ ինձ բոլորովին ցանկալի ալ չէ օտար տէրութեանց միջամտութեանը դիմել, քանզի դրանով մենք առիթ կը ներկայացնէինք նրանց մեր տէրութեան ներքին գործերին խառնուելու և բացայայտ է որ այդպիսի մի քայլ մեր կողմից Սուլթանի, որ մեր խալիֆն ալ է, արդարացի դժգոհութիւնը և բարկութիւնը կը գրգռէր մեզ դէմ և յետոյ յետինն քան զառաջին վատ կը լինէր մեզ համար: Նորին մեծութիւնը մեզ շատ լաւ է ճանաչում և մեր հլու հպատակութեան մասին նա բոլորովին վստահ է. դրան ապացոյցն այն շնորհները և պարգևները, որոնց նա մեզ քրդերիս յաճախ արժանացնում է և մենք աւելին պէտք ու ցանկութիւն չունինք բոլորովին»:

Շէյխը իր այս ճառով արդէն իր վերջի խօսքն ասել էր: Շուտով էլ բերեցին սովորական դայֆէն արծաթեայ ափսէի վրայ շարած փոքրիկ ֆինջաններով, որոնք գետեղուած էին ամենանուրբ ճարտարարուեստութեամբ շինուած թափանցիկ ոսկէզօծ զայֆերի մէջ: Շէյխը ըստ արեւելեան հիւրընկալական օրէնքին հրամայեց մատուցանել նախ կոնսուլին և հիւրերին, իսկ ամենից յետոյ ինքն էլ վեր առեց մի ֆինջան:

Թուրքիայում ղայֆէ տալ հիւրերին նշանակում է թէ ընդունելութեան վերջն է, հետեւաբար պէտք է մեկնել: Ուստի կոնսուլը խելոյն վեր կենալով շնորհակալութիւն յայտնեց Շէյխին իր բարեսրտութեան համար և ներողութիւն խնդրեց նրան պատճառած ձանձրութեան մասին: Շէյխը խիստ քաղաքավարի կերպով մի քայլ ընդ առաջ գալով մօտեցաւ հիւպատոսին և մտերմօրէն խօսելով ասաց որ ընդհակառակը ինքը պէտք է ներողութիւն խնդրէ անկարող լինելով իր բարձրաստիճան ղարիւր հիւրին ըստ արժանոյն մեծարելու, նկատելով որ աշխարհի այդ խուլութեամբ, հեռաւոր լեռնային անկիւններում ոչ մի հնարաւորութիւն էլ չէր կարող լինել մի եւրոպացի անակնկալ այցելուի ճաշակին համաձայն հիւրընկալութիւն անելու: «Դուք» ասեց նա, «վարժած էիք քաղաքակիրթ կեանքի ամեն վայելքներին ու ճաշակին, բայց այստեղ Քրդաստանում մենք մեր շատ սակաւագիտութեամբը հանդերձ, կարծեմ, աւելի առողջ ենք, աւելի երջանիկ ու գոհունակ, և քանի որ բախտի անիւն ալ ձեզ այժմ աշխարհի այս կողմը շարժել է, հարկ է որ դուք ալ հաշտուէք ձեր նոր վիճակի ու կենցաղի հետ ու վարժուէք մեր ապրած կեանքին»:

Հիւպատոսը մի քանի խօսքերով բացատրեց իր գոհունակութիւնը Շէյխի հետ ծանօթանալուն համար և ասեց որ ինքը այսպիսի մի առողջարար տեղ և այսպիսի մի բարեսիրտ հիւրընկալի մօտ կուգէր մի քանի ամիս ապրել, սակայն ստիպուած է իր ունեցած հրահանգներին հպատակուել: Հետեւաբար այս առթիւ ցանկանում է իր յարգանքների հետ նաև հրաժեշտի ողջոյնը մատուցանել նրան՝ հետեւալ օրը կանուխ մեկնել կարենալու համար, որպէսզի շուտով իր պաշտօնատեղին հասնի: Շէյխը ասեց որ ինքը սովոր է իր հիւրերին երկար պահել իր մօտ և բաց չթողնել նրանց գոնէ մի ամսից առաջ, բայց քանի որ այդպէս է, ինքը շատ դժուարաւ պիտի համաձայնուի այդ մասին, և խնդրեց որ կոնսուլը բարեհաճ գրտնուի ընդունել չնչին մի նուէրը, զոր առաւօտեան պիտի մատուցուի նրան, որպէս յիշելիք իրանց փոխադարձ բարեկամութեանը: Գիտնալով որ Քրդաստանում մատուցեալ նուէրը մերժելը մեծ վիրաւորանք է համարոււմ, հիւպատոսը համաձայնուեց պայմանաւ որ նուիրատուութիւնը փոխադարձօրէն կատարուէր: Արեւելեան սովորական սալամները փոխանակուելուց յետոյ մենք դուրս եկանք սենեակից և վար իջանք ճանապարհորդութեան պատրաստութիւն տեսնելու:

Ականատես

(Կը շարունակուի)